

**ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ
ԾՐԱԳՐԱՅԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ (ԱՌՑԱՆՑ E-REPORTING ՀԱՄԱԿԱՐԳԻ
ՍՊԱՍԱՐԿՈՒՄ) ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՀՀ ՎԿ-ԲՄԽԾՁԲ-2026/1**

ք. Երևան

«13» մարտի 2026թ.

Վիճակագրական կոմիտեն, ի դեմս գլխավոր քարտուղար Ա. Հայրապետյանի, որը գործում է կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Բիոնկոդ» ՍՊԸ-ն, ի դեմս Ա. Հովակիմյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է տեղեկատվական տեխնոլոգիաների ծրագրային ապահովման սպասարկման (առցանց e-reporting համակարգի սպասարկում) ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 և 1.1 հավելվածներով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջներին:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 և N 1.1 հավելվածներով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը:

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 և 1.1 հավելվածներով նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն:

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը:

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը:

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 և 1.1 հավելվածներով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս կողմից մատուցված պատշաճ ծառայության դիմաց վճարման ենթակա գումարները, իսկ վճարան ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու պատշաճ մատուցված ծառայության դիմաց վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 և 1.1 հավելվածներով սահմանված պայմաններով ապահովել ծառայության պատշաճ մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է 31550000 (երեսունմեկ միլիոն հինգ հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամ:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է պայմանագրի 3-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում՝ ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված ամիսներին, բայց ոչ ուշ, քան մինչև 2026 թվականի դեկտեմբերի 25-ը:

Ընդ որում վճարում կատարելու նպատակով հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվելու օրվանից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն վճարման հանձնարարագիրը և հանձնման-ընդունման արձանագրության պատճենը մուտքագրում է լիազորված մարմնի գանձապետական համակարգ, իսկ սահմանված կարգի համաձայն ներկայացված փաստաթղթերի հիման վրա լիազորված մարմինը տվյալ վճարումը կատարում է հանձնման-ընդունման արձանագրությունը գանձապետական համակարգ մուտքագրված լինելու դեպքում՝ սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետներում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 և 1.1 հավելվածներով նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 1.0 (մեկ) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0.15 (զրո ամբողջ տասնհինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն սահմանված ժամկետում չվճարված գումարի 0.15 (զրո ամբողջ տասնհինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորություններն ամբողջությամբ և պատշաճ՝ պայմանագրով սահմանված պահանջներին համապատասխան կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (\$ՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակցի ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի գրավոր առաջարկի առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի համար ծառայության մատուցման պահանջը չի վերացել, իսկ Կատարողի գրավոր առաջարկը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 7 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավելի քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման շրջանակներից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.10 Կատարողն իրավունք ունի պայմանագրի կնքումից հետո Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 48-րդ գլխով սահմանված դեպքերում և կարգով կատարել գնման պայմանագրից ծագող դրամական պահանջի զիջում՝ պահանջի զիջման դիմաց ֆինանսավորման (ֆակտորինգի) պայմանագրի (այսուհետ՝ ֆակտորինգի պայմանագիր) հիման վրա: Ֆակտորինգի պայմանագիրը պետք է սահմանի, որ ֆինանսական գործակալը համաձայն է, որ պայմանագրով նախատեսված հիմքերի առկայության դեպքում Պատվիրատուն վճարումներն իրականացնելիս ապահովի Կատարողի նկատմամբ տույժերի ու տուգանքների հաշվարկումը և հաշվանցումը վճարվելիք գումարների հետ՝ անկախ պահանջը զիջված լինելու հանգամանքից: Ընդ որում, ֆակտորինգի պայմանագրի հիման վրա պահանջի զիջման մասին գրավոր ծանուցումը (հավելված N 4) ստանալու դեպքում Պատվիրատուն պայմանագրով սահմանված վճարումը կատարում է ֆինանսական գործակալին, եթե ծանուցումը ստացվել է Պատվիրատուի կողմից վճարման հանձնարարագիրը և արձանագրության պատճենը լիազորված մարմնի գանձապետական համակարգ մուտքագրելու օրվան նախորդող օրը:

7.11 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

7.12 Սույն պայմանագիրը կազմված է 26 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 1.1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.13 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ ՈՒ

Վիճակագրական կոմիտե
Ք. Երևան, Կառավարական տուն 3
ՀՎՀՀ 02507509
ՀՀ ՖՆ Գործառնական վարչություն
Հ/Հ 900011011013
Գլխավոր քարտուղար՝

Ա. Հայրապետյան

/ստորագրություն/
Կ.Տ



Կ Ա Տ Ա Ր Ո Ղ

«Բիոնկոդ» ՍՊԸ
ք. Երևան, Հակոբ Հակոբյան 3
ՀՎՀՀ 00142121
«Ինտեկոբանկ» ՓԲԸ
Հ/Հ 2052822071461001
Տնօրեն՝

Ա. Հովակիմյան

/ստորագրություն/
Կ.Տ



ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

Ծառայության							
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	ընդհանուր գինը /ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	մատուցման	
						հասցեն	Ժամկետը
1	72261180/501	Տեղեկատվական տեխնոլոգիաների ծրագրային ապահովման սպասարկման (առցանց e-reporting համակարգի սպասարկում) ծառայություններ՝ համաձայն հավելված 1.1-ի	դրամ	31550000	1	ք. Երևան, Կառավարական տուն 3	Մինչև 30.12.2026թ. -ը ներառյալ

Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ ՈՒ

Վիճակագրական կոմիտե
 ք. Երևան, Կառավարական տուն 3
 ՀՎՀՀ 02507509
 ՀՀ ՖՆ Գործառնական վարչություն
 Հ/Հ 900011011013
 Գլխավոր քարտուղար՝

Ա. Հայրապետյան _____
 /ստորագրություն/
 Կ.Տ.



Կ Ա Տ Ա Ր Ո Ղ

«Բիոնկոդ» ՍՊԸ
 ք. Երևան, Հակոբ Հակոբյան 3
 ՀՎՀՀ 00142121
 «Ինտելեքտուալ» ՓԲԸ
 Հ/Հ 2052822071461001
 Տնօրեն՝

Ա. Հովակիմյան _____
 /ստորագրություն/
 Կ.Տ.



ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

Տեղեկատվական տեխնոլոգիաների ծրագրային ապահովման սպասարկման (առցանց e-reporting համակարգի սպասարկում) ծառայությունների

Նպատակը

ՀՀ վիճակագրական կոմիտեում (այսուհետ՝ Արմատատ) ներդրված տեղեկատվական համակարգի (այսուհետ՝ Համակարգ) սպասարկման ծառայությունների իրականացում:

Մատուցվող ծառայությունների շրջանակը

Ապահովել Արմատատի Համակարգի սպասարկում՝ սույն հավելվածով նախատեսված բոլոր ծառայությունների մատուցումը, ստորև ներկայացված ենթահամակարգերի համար՝ առկա բաղադրիչներում իրականացնելով փոփոխություններ՝ ապահովելով փոփոխությունների արդյունքում նոր ծրագրային ծածկագրերի (source code) տարբերակների ստեղծումը:

1.	Հաշվետվությունների ներկայացման հարթակ, հանրային պորտալ	Հարթակը նախատեսված է ռեսպոնդենտ հանդիսացող տնտեսվարողների կողմից հաշվետվությունների ներկայացման, իրենց գործունեության մասին տեղեկատվության արդիականացման, ինչպես նաև ռեսպոնդենտին տրամադրվող այլ տեղեկատվության՝ ներկայացված հաշվետվությունների պատմություն, ծանուցումներ և ուղեցույցեր, տրամադրման համար: Հարթակը ունի հետևյալ գործառնությունները. • Տնտեսվարողի գրանցում/իսկորոշում • Լիազորված անձի իսկորոշում • Օգտատիրոջ պրոֆիլի կառավարում • Տնտեսվարողի պրոֆիլի կառավարում • Համակարգի ծանուցումներ • Հաշվետվությունների մատյան • Հաշվետվությունների ներկայացում • Հաճախ տրվող հարցեր • Առցանց նամակագրություն • Վարչական տուգանքների վճարում
2.	Հաշվետվությունների կառավարման հարթակ	Հարթակը ներառում է Արմատատի համապատասխան իրավասություն ունեցող օգտատերերի (ադմինիստրատորների) համար նախատեսված դիտման, ստուգման և կառավարման գործիքներ՝ CRUD հնարավորությամբ: Հարթակը ունի հետևյալ գործառնությունները. • Կազմակերպական կառուցվածքի կառավարում • Ռեսպոնդենտների ռեգիստրի կառավարում

		• Հաշվետվությունների ձևանմուշների կառավարում • Մուտք որպես ռեսպոնդենտ • Ռեսպոնդենտների խմբերի կառավարում • Ներկայացված հաշվետվությունների կառավարում • Աշխատակցի գրասենյակի կառավարում • Լիազորման կառավարում • Ռեսպոնդենտների դիմումներ • Տեղեկատվական աղյուսակների կառավարում • Տվյալների վիզուալիզացիա և ելքային աղյուսակներ • Վարչական տուգանքներ • Հաճախ տրվող հարցեր • Առցանց հաղորդագրությունների և ծանուցումների կառավարում
3.	Տվյալների պահոցներ	Տվյալների պահոցները նախատեսված են հավաքագրված տվյալների տարբեր տեսքով և տարբեր նշանակություններով պահպանման համար: Դրանք են. սկզբնական (միջանկյալ/վերջնական), ագրեգացման (անվանական/անվանազերված/լրամշակման), մեթատվյալների և տարածման տվյալների պահոցները:
4.	Տվյալների փոխակերպում և միգրացիա	Էլեկտրոնային առկա և պատմական տվյալների փոխակերպումը նոր տվյալների կառուցվածքին և դրանց միգրացիան Համակարգ:
5.	Սարքավորումների սպասարկում	Սարքավորումները տեղակայված են հիմնական (ք. Երևան) և պահուստային (ք. Եղվարդ) տվյալների կենտրոններում:

I. ՀԱՄԱԿԱՐԳԻ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՆԵՐԱՌՈՒՄ ԵՆ՝

– Ծրագրային ապահովման և հարթակի սպասարկում

1. Համակարգի անխափան աշխատանքն ապահովելու նպատակով անհրաժեշտ փոփոխությունների, լրամշակումների իրականացում (հարթակների ծրագրային փոփոխություններ, որոնք կապված են նաև օրենսդրական փոփոխությունների հետ),
2. Համակարգի կարգավորում, երբ դրանց անգործելիությունը կապված է ծրագրային թերություններին կամ սխալներին:
3. Համակարգի օգտվողներին խորհրդատվություն և տեխնիկական աջակցություն ցուցաբերող մասնագիտացված խմբերի մոտ ծրագրային ապահովումների մասով ի հայտ եկած հարցերի շուրջ պարզաբանումների տրամադրում,
4. Համակարգում սխալների/թերությունների հետազոտություն և դրանց շտկում, ներառյալ՝ ժամանակավոր լուծումների տրամադրում և թերությունների շրջանցում մինչև համակարգի կարգաբերումները և թարմացումները,
5. Թարմացումների մշակում, թեստավորում, տեղադրում,
6. Ծրագրային ապահովման նոր տարբերակների տրամադրում և տեղադրում, ինչպես նաև համապատասխան փաստաթղթերի և նյութերի թարմացում: Բոլոր ծրագրերի փոխադարձ համագործակցությունը լիարժեք նկարագրող տոպոլոգիայի տրամադրում:
7. Օգտագործվող CMS-ի բոլոր բաղադրիչները (հիմնական համակարգ, հավելումներ, թեմաներ և այլն) պետք է պարբերաբար թարմացվեն և պահվեն վերջին հասանելի տարբերակով՝ ապահովելով Համակարգի անվտանգությունն ու կայունությունը:
8. Համակարգի կառավարման միջավայրում կիրառվող բոլոր հավելվածների (plugin, addon) պարբերական վերանայում և թարմացում (վերջին կայուն տարբերակներ՝ latest stable versions), ինչպես նաև չօգտագործվող կամ անվտանգության ռիսկեր պարունակող հավելվածների ապաակտիվացում և/կամ հեռացում:

– Սերվերների սպասարկում հիմնական (ք. Երևան) և պահուստային (ք. Եղվարդ) տվյալների կենտրոններում, մասնավորապես՝

9. Սարքավորումների սպասարկում, օպտիմալացում, արդիականացում և ռեսուրսների կառավարում, ներառյալ՝
 - Սերվերների օպերացիոն համակարգերի, միջավայրերի և ծրագրային ապահովման պարբերական թարմացում
 - Կատարողականության մշտադիտարկում (performance monitoring) և բեռնվածության/կարողությունների կառավարում (capacity & load management):
 - Վեբ սերվերների և տվյալների բազաների սպասարկում ու օպտիմալացում:
 - Լոգերի հավաքագրում և վերլուծություն (log management & audit):
10. Սերվերների աշխատանքում սխալների, անոմալիաների, խոցելիությունների և վթարային իրավիճակների հայտնաբերում,
11. Կոնֆիգուրացված սերվերների համակցում համակարգում առկա այլ սերվերների կամ ենթահամակարգերի հետ՝ դրանց փոխգործունակությունը ապահովելու նպատակով:
12. Սերվերներում պարունակվող տեղեկատվության ամբողջականության և անվտանգության ապահովման կազմակերպում, իրականացում

– **Տվյալների շտեմարանի (ՏՇ) սպասարկում և խորհրդատվությունների տրամադրում.**

13. ՏՇ-ի օգտագործման օպտիմիզացում և կառավարում՝ ներառյալ հարցումների օպտիմիզացում, ինդեքսների և կապերի կառավարում, կատարողականության մշտադիտարկում:
14. ՏՇ-ի ծրագրային ապահովման թարմացում՝ արտադրողի կողմից ներկայացվող վերջին կայուն տարբերակներին (latest stable versions) համապատասխան՝ ապահովելով տվյալների ամբողջականությունն ու Համակարգի անխափան աշխատանքը:
15. ՏՇ-ի կառուցվածքի կառավարում migration մեխանիզմների միջոցով՝ ապահովելով աղյուսակների, դաշտերի, կապերի և ինդեքսների ստեղծման ու փոփոխման վերահսկելի, փաստաթղթավորված և միջավայրերից անկախ վերարտադրելի գործընթաց:
16. Համակարգի աշխատանքի համար անհրաժեշտ նախնական և ուղեցույց տվյալների ներմուծման ապահովում SEED մեխանիզմների միջոցով՝ ապահովելով ՏՇ-ի բովանդակության նույնականությունը զարգացման, թեստավորման և արտադրական միջավայրերում:
17. ՏՇ-ում կուտակվող հին կամ քիչ օգտագործվող տվյալների արխիվացման գործընթացի կազմակերպում և իրականացում՝ սահմանված արխիվացման քաղաքականությանը համապատասխան:
18. ՏՇ-ի պահուստային պատճենների (backup) պարբերական ստեղծման, պահպանման և անհրաժեշտության դեպքում վերականգնման գործընթացի կազմակերպում և իրականացում:

– **Անվտանգության ապահովում**

19. Կարևոր/կրիտիկական իրադարձությունների վերաբերյալ ծանուցումների (alerts) ապահովում:
20. Մուտքերի վերահսկում, վեբ հավելվածների պաշտպանություն (WAF)՝ SQL Injection, XSS և այլ վեբ հարձակումներից,
21. Համակարգի աշխատանքի մշտադիտարկման (monitoring) գործիքների ներդնում, որոնք կծանուցեն հարթակների խափանումների, հարձակումների և այլ անվտանգային խնդիրների մասին:

– **Backup և Disaster Recovery**

22. Պարբերական պահուստավորում (Backup)
23. Տվյալների և կարգավորումների պահուստավորում (backup):
24. Վթարային վերականգնման պլանի (Disaster Recovery) մշակում և իրականացում,

– **Համակարգի ծրագրային կոդերի (Source code) պահպանում և կառավարում**

25. Համակարգի բոլոր ծրագրային կոդերը (source code) պարտադիր կերպով պետք է պահպանվեն և վարվեն Պատվիրատուի ծրագրային ապահովման սերվերի վրա տեղակայված Git համակարգում: Կատարողին տրամադրվում է համապատասխան սահմանափակված հասանելիություն նշված Git միջավայրին՝ բացառապես համակարգի սպասարկման, զարգացման և փոփոխությունների իրականացման նպատակով:
26. Համակարգի շահագործումն ու հետագա զարգացումը պետք է հիմնված լինեն բացառապես Պատվիրատուի Git համակարգում պահպանվող ծրագրային կոդերի վրա:

II. ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

– **Սպասարկման ծառայություններին ներկայացվող պահանջները**

1. Կատարողը պետք է իրականացնի սպասարկում ներկայացված համակարգի համար պայմանագրի գործողության ողջ ընթացքում: Կատարողը պարտավոր է սպասարկման ամբողջ ժամանակահատվածի ընթացքում ունենալ առանձնացված թիմ՝ որոնցից առնվազն 2-ը լինեն միմյանց փոխարինելի ավագ ծրագրավորողներ:

Կատարողը Համակարգի սպասարկման աշխատանքները համակարգելու և իրականացնելու նպատակով պետք է հատկացնի ներկայացուցիչ՝ սպասարկման համակարգող, գրավոր տրամադրելով Պատվիրատուին նրա անունը, ազգանունը, հայրանունը, էլեկտրոնային փոստի հասցեն և հեռախոսահամարը:

Սպասարկման համակարգողը պետք է՝

- 1.1. Սեղմ ժամկետում ուսումնասիրի Համակարգի ֆունկցիոնալությունը, ճիշտ կառուցի բիզնես ռազմավարությունը, 15 օրացուցային օրվա ընթացքում ներկայացնի աշխատանքների կատարման ժամանակացույցը և հետագայում ապահովի իրականացումը:
- 1.2. Համակարգի շահագործման ընթացքում առաջացած տեխնիկական հարցերի վերաբերյալ տրամադրի խորհրդատվություն (հեռախոսի կամ էլեկտրոնային փոստի միջոցով, անհրաժեշտության դեպքում նաև ներկայանալով Արմատատ):
- 1.3. Իրականացնի Համակարգի շահագործման ընթացքում առաջացած և փոփոխության հայտերի (էլեկտրոնային թերթիկի - ticket) միջոցով ուղարկված տեխնիկական խնդիրների լուծումը:
- 1.4. Իրականացնի այլ աշխատանքներ կապված Համակարգի անխափան աշխատանքի ապահովման հետ:

Համակարգի սպասարկման ժամերն են 9:00 մինչև 18:00 երկուշաբթիից ուրբաթ՝ համաձայն 5x8 (շաբաթական 5 օր, 8 ժամ) սկզբունքի:

Անհրաժեշտության դեպքում Համակարգի անխափան աշխատանքի ապահովման նպատակով, Կատարողը պետք է իրականացնի աշխատանքի ընթացքում առաջացող՝ անհետաձգելի շտկում պահանջող, ծրագրային թերությունների և բացթողումների շտկումը շուրջօրյա ռեժիմով (7 օր/24 ժամ), այդ թվում՝ ոչ աշխատանքային և տոնական օրերին (ծրագրային թերությունը և բացթողումը անհետաձգելի է համարում Պատվիրատուն):

2. Կատարողը պետք է հաշվի առնի, որ տեխնիկական սպասարկման ընթացքում Արմատատը կարող է հայցել աշխատանքի ընդհանուր ծավալի մինչև 45%-ի չափով Համակարգում փոփոխություններ կատարելու մասին, որոնք պետք է իրականացվեն Կատարողի հաշվին:

Հայտնաբերված խնդիրը լուծելու ժամանակը կախված կլինի դրա բարդության աստիճանից: Մասնավորապես.

- 2.1. Բարդության առաջին մակարդակ՝ «Հրատապ», Համակարգը չի գործում, պահանջվող ֆունկցիաներից և/կամ ենթահամակարգի բաղադրիչներից հնարավոր չէ օգտվել, պատասխանելու ժամանակը 1 ժամ է, իսկ լուծում գտնելու կամ շրջանցող լուծում առաջադրելու համար նախատեսվում է 6 ժամ:
- 2.2. Բարդության երկրորդ մակարդակ՝ «Բարձր», հիմնական ֆունկցիաները հասանելի չեն, պատասխանելու համար՝ 2 ժամ, իսկ լուծում գտնելու կամ շրջանցող լուծում առաջադրելու համար նախատեսվում է 12 ժամ:
- 2.3. Բարդության երրորդ մակարդակ՝ «Միջին», միջին առաջնահերթության գործառույթները հասանելի չեն, պատասխանելու համար՝ 4 ժամ, իսկ լուծում գտնելու կամ շրջանցող լուծում առաջադրելու համար նախատեսվում է 2 օր:
- 2.4. Բարդության չորրորդ մակարդակ՝ «Ցածր», Համակարգի ընդհանուր մատակարարի վրա ազդեցությունը նվազագույն է, պատասխանելու ժամկետը՝ 1 օր՝ 5 օրվա ընթացքում լուծում գտնելու և շրջանցիկ լուծում առաջարկելու համար:
3. Համակարգը պետք է կարողանա ապահովել 24/7 ռեժիմով աշխատանք: Համակարգի սարքին վիճակում լինելու ժամանակը պետք է լինի 99.3 (+, - 0.7%) տոկոսից ավել: Սա նշանակում է, որ համակարգի՝ տարեկան անսարք վիճակում լինելու ժամանակը պետք է լինի 2 (+, - 2օր) օրից պակաս: Սպասարկման և թարմացումների նպատակով համակարգի անջատումները պետք է լինեն պլանային և անպայմանորեն համաձայնեցվեն Արմատատի հետ: Համակարգի վթարային անջատումները չեն կարող գերազանցել 4 (չորս) ժամը, եթե պատճառը անսարք սարքավորման փոխանակման նպատակով նոր սարքավորման բացակայությունը չէ: Պատվիրատուի պահանջի դեպքում Կատարողը պարտավոր է ստորագրել սպասարկման գործընթացի մասին համաձայնագիր (SLA – Service Level Agreement)
- 3.1. Առավելագույն ծանրաբեռնվածության պայմաններում համակարգի 95% ֆունկցիոնալության արձագանքման ժամանակահատվածը պետք է կազմի առավելագույնը 5 վայրկյան:
- 3.2. Համակարգի կոնֆիգուրացիոն փոփոխությունները և թարմացումները պետք է հեշտորեն իրականացվեն և որևէ ազդեցություն չունենան համակարգի աշխատանքի վրա:

– Համակարգի փոխգործակցության ապահովում

4. Սպասարկման ծառայությունների մատուցումն իրականացնելիս անհրաժեշտ է հաշվի առնել Համակարգում ներդրված և շահագործվող բոլոր հարթակների և ենթահամակարգերի փոխգործակցությունը: Այս առումով Համակարգի վերակառուցման, ձևափոխման և/կամ թարմացման դեպքում անհրաժեշտ է նախատեսել փոխկապակցված համակարգերի հետ համապատասխանեցման պահանջը:
5. API-ի միջոցով այլ տվյալների բազաների հետ ինտեգրման ապահովում, ինտեգրման պահանջների և նպատակների հստակ սահմանում, մշակման ընթացքում սխալների նվազագույնի հասցում և համակարգերի միջև հուսալի փոխգործակցության ապահովում, ինչպես նաև կառավարման հնարավորություն, այդ թվում՝ ադմինիստրատորի միջերեսի ապահովում, որը կներառի սխալների և գործողությունների մատյանների (log-երի) դիտում, օգտվողների և համակարգերի ակտիվության վերահսկում, API բանալիների (key-երի) կառավարում, ինչպես նաև տվյալների ձեռքով ներմուծման հնարավորություն՝ JSON ֆայլերի միջոցով:

– **Տեխնիկական առաջադրանքների մշակում/լրամշակում**

6. Համակարգերի վերակառուցման կամ ձևափոխման ծառայությունները պետք է ներառեն Կատարողի կողմից տեխնիկական նկարագրերի (technical specification) և տեխնիկական առաջադրանքների (terms of reference) մշակում կամ դրանցում համապատասխան փոփոխությունների իրականացում: Համակարգերի տեխնիկական նկարագրերը և տեխնիկական առաջադրանքները պետք է մշտապես լրամշակվեն՝ գործառույթային, օրենսդրական փոփոխություններով և այլ գործոններով պայմանավորված համակարգերի վերակառուցման կամ ձևափոխման դեպքում: Կատարողը յուրաքանչյուր ամսվա վերջին աշխատանքային օրը տեխնիկական նկարագրերը և տեխնիկական առաջադրանքները կամ դրանցում համապատասխան փոփոխությունների վերաբերյալ բոլոր տեսակի տեղեկությունները պետք է տրամադրի Պատվիրատուին՝ թե՛ տպված, և թե՛ էլեկտրոնային կրիչով:

– **Թեստավորման իրականացում**

7. Պայմանագրի կնքումից հետո Պատվիրատուն 5 օրացուցային օրվա ընթացքում Կատարողին է տրամադրում թեստային միջավայրի web և լոգերի ամբողջական հասանելիություն, ինչպես նաև տրամադրում է տվյալների շտեմարանի սխեմաները: Կատարողը հասանելիություններ ստանալուց հետո 15 օրացուցային օրվա ընթացքում պետք է գրավոր տեղեկացնի Պատվիրատուին, որ Կատարողի թեստային միջավայրում ապահովվել է Պատվիրատուի թեստային միջավայրին ամբողջությամբ նույնական միջավայրի առկայությունը և տրամադրի Պատվիրատուի տեղեկատվական տեխնոլոգիաների վարչության աշխատակիցներին Կատարողի թեստային միջավայրի web և լոգերի ամբողջական հասանելիություն, ինչպես նաև տրամադրի տվյալների շտեմարանի սխեմաները:
8. Ծրագրային ապահովումները և/կամ դրանց տարբերակները նախքան Պատվիրատուի թեստային միջավայրում տեղադրումը պետք է փորձարկվեն Կատարողի թեստային միջավայրում Կատարողի կողմից, որից հետո տեղայնացվեն Պատվիրատուի թեստային միջավայրում: Կատարողի կողմից պետք է իրականացվի թեստավորում նաև Պատվիրատուի թեստային միջավայրում:
Պատվիրատուի կողմից, Կատարողի կողմից տրամադրված ծրագրային ապահովումների որակի ստուգման արդյունքների համաձայն, եթե ծրագրային ապահովման մեջ բացակայում են Կատարողի կողմից թեստավորված մասում թերությունները և խնդիրները, ապա ծրագրային ապահովումը կտեղափոխվի Պատվիրատուի թողարկման արտադրական սերվեր (production server):
9. Պատվիրատուի կողմից Կատարողի կողմից տրամադրված ծրագրային ապահովումների որակի ստուգման արդյունքում թերությունների հայտնաբերման դեպքում այդ թերությունների վերաբերյալ տեղեկատվությունը Պատվիրատուից ստանալուց հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում Կատարողը Պատվիրատուին պետք է գրավոր ներկայացնի հայտնաբերված թերությունների և խնդիրների շտկմանն ուղղված միջոցառումների իրականացման գործողությունների և ողջամիտ ժամանակացույցի վերաբերյալ տեղեկատվությունը:
10. Ծրագրային ապահովումների և/կամ դրանց տարբերակների յուրաքանչյուր գործառույթի թեստավորման համար Կատարողի կողմից պետք է կազմվի համապատասխան թեստավորման պլան, որը կսահմանի թեստավորման քայլերի և գործողությունների հաջորդականությունը՝ ըստ համակարգի կիրառման դեպքերի և սցենարների: Թեստավորման պլանը պետք է գրանցվի սույն բաժնի 11 կետում նշված՝ Կատարողի հատուկ համակարգում Պատվիրատուի կողմից ներկայացված յուրաքանչյուր առաջադրանքի համար՝ թեստավորման

կիրառված եղանակների և գործողությունների մանրամասն նկարագրությամբ, և լինի հասանելի Պատվիրատուին:

11. Թեստավորման և շահագործման ընթացքում բացահայտված թերությունները պետք է գրանցվեն Կատարողի առաջադրանքների, սխալների, բարելավումների առաջադրման և դրանց կատարման ընթացքին հետևելու համար նախատեսված հատուկ համակարգում (օրինակ՝ Jira, RedMine, Asana կամ նմանատիպ այլ համակարգ), որին մուտք պետք է տրամադրվի Պատվիրատուի համապատասխան աշխատակիցներին՝ ոչ ուշ քան Պայմանագրի կնքումից հետո 15 օրացուցային օրվա ընթացքում: Յուրաքանչյուր այդպիսի գրառում իրենից ներկայացնելու է էլեկտրոնային թերթիկ (ticket/tasks), որը կներառի խնդրի/թերության մանրամասն նկարագրությունը, վերարտադրման քայլերը և այլ լրացուցիչ տեղեկատվություն (օր.՝ լուծման առաջարկ, հղում փաստաթղթին):
12. Պատվիրատուի կողմից Կատարողին ներկայացվող առաջադրանքները (tickets/tasks) պետք է գրանցվեն 11 կետում նշված՝ Կատարողի հատուկ համակարգում: Յուրաքանչյուր առաջադրանքի՝ Պատվիրատուի կողմից գրանցումից 3 աշխատանքային օրվա ընթացքում Կատարողը պետք է նույն համակարգի միջոցով հայտնի նշված առաջադրանքի կատարման ժամկետը՝ նշելով դրա իրականացման համար անհրաժեշտ ժամանակային և մարդկային ռեսուրսների վերաբերյալ տեղեկատվություն՝ ըստ համապատասխան գործողությունների (օրինակ՝ վերլուծություն, ծրագրավորում, թեստավորում) և ներգրավված մասնագետների՝ ներառելով անուն, ազգանուն և հայրանունը (օրինակ՝ բիզնես վերլուծաբան, ծրագրավորող, թեստավորող): Կատարողի կողմից առաջադրանքների (tickets/tasks) իրականացման վերաբերյալ նշվող ժամկետը պետք է լինի ոչ ավել քան 30 (երեսուն) օրացուցային օր, իսկ Կատարողի կողմից համապատասխան հիմնավորման ներկայացման դեպքում, եթե այդ հիմնավորումն ընդունվում է Պատվիրատուի կողմից, ոչ ավել քան 60 (վաթսուն) օրացուցային օր: Կատարողի կողմից նշված ժամկետում առաջադրանքի իրականացման անհնարինության դեպքում նշված ժամկետից առնվազն 3 (երեք) աշխատանքային օր առաջ Կատարողը Պատվիրատուին պետք է գրավոր ներկայացնի ժամկետի երկարաձգման առաջարկ և հիմնավորում, ընդ որում սկզբնական ժամկետի և առաջարկվող երկարաձգման ժամկետի հանրագումարը չի կարող լինել 60 (վաթսուն) օրացուցային օրից ավել: Համապատասխանաբար 30 (երեսուն) և 60 (վաթսուն) օրացուցային օրվա ընթացքում առաջադրանքի չիրականացման դեպքում առաջադրանքը համարվում է չկատարված: Պատվիրատուի կողմից Կատարողին ներկայացված առաջադրանքները (tickets/tasks) համարվում են կատարված, եթե Պատվիրատուի թեստային միջավայրում տեղայնացված ծրագրային ապահովման տարբերակը Պատվիրատուի կողմից տեղայնացվում է Պատվիրատուի թողարկման արտադրական սերվեր (production server) և ծրագրային ապահովման տարբերակում բացակայում են «Բացահայտված թերություններ» բաժնում 47-րդ կետում նշված դեպքերը, և ապահովվում է համակարգի ամբողջական ֆունկցիոնալությունը կամ Պատվիրատուի թեստային միջավայրում տեղայնացված ծրագրային ապահովման տարբերակի վերաբերյալ Պատվիրատուն սույն բաժնի 11 կետում նշված՝ Կատարողի հատուկ համակարգում առաջադրանքին (ticket/task) տալիս է «փակված» (closed) կարգավիճակ: Պատվիրատուն իրավունք ունի վերաբացել (reopen) ցանկացած կարգավիճակ ունեցող առաջադրանքը (ticket/task), եթե Պատվիրատուի կողմից թեստային միջավայրում տեղայնացված ծրագրային ապահովման տարբերակի ստուգման ընթացքում կամ Պատվիրատուի թողարկման արտադրական սերվերում (production server) տեղայնացնելուց հետո ի հայտ են գալիս «Բացահայտված թերություններ» բաժնում 47-րդ կետում նշված դեպքերը, և չի ապահովվում համակարգի ամբողջական ֆունկցիոնալությունը: Պատվիրատուի կողմից առաջադրանքը վերաբացելուց հետո 5 (հինգ) օրացուցային օրվա ընթացքում առաջադրանքի չիրականացման դեպքում առաջադրանքը համարվում է չկատարված:
13. Համակարգերի թեստավորման համար պետք է առնվազն կիրառվեն հետևյալ ֆունկցիոնալ և ոչ ֆունկցիոնալ թեստավորման տեսակները՝

Թեստի տեսակ	Նպատակ
Կոդի թեստավորում Code testing	Իրականացվում է ծրագրավորման ինժեներների կողմից ծրագրային միավորի իրականացման ժամանակ:
Համակարգի միավորի թեստ Unit testing	Կիրառվում է արդեն պատրաստ մեկ միավորի՝ ենթագործառնության ստուգման համար:

Ինտեգրման թեստ Integration testing	Ուղղված է բացահայտելու տարբեր ենթահամակարգերի և երրորդ կողմի համակարգերի հետ ինտեգրման արդյունքում առաջացած խնդիրները:
Հետանցման թեստ Regression testing	Իրականացվում է նոր ծրագրային միավորի կամ նոր համակարգի գործառույթի ներդրման ժամանակ՝ բացառելու նոր հավելումների արդյունքում նախորդ գործառույթների թերությունները:
Արտադրողականության թեստ Performance testing	Բացահայտում է համակարգի արձագանքները ոչ ստանդարտ և չնախատեսված իրավիճակներում, ինչպես նաև երրորդ կողմերի համակարգերի հետ փոխազդեցության արդյունքում առաջացած համակարգի արտադրողականության խնդիրները:
Բեռնավորման թեստ Load testing	Նպատակն է պարզել համակարգի կարողությունները մեծաքանակ օգտագործողների համաժամանակյա աշխատանքների կամ մեծածավալ տվյալների հոսքի ժամանակ:
Համատեղելիության թեստ Compatibility testing	Գնահատում է համակարգի համատեղելիությունը համակարգչային տարբեր միջավայրների հետ, ներառյալ՝ գործավար համակարգը, սարքաշարը, ցանցային թողունակությունը, զննիչները, տվյալների շտեմարանները և այլն:
Օգտագործման հարմարավետության թեստ Usability testing	Ուղղված է բացահայտելու համակարգի կիրառման թերությունները, օգտագործման հարմարավետության աստիճանը և համապատասխանությունը համակարգի օգտագործողների լսարանին՝ վերջնական օգտագործողներին:
Անվտանգության թեստ Security testing	Ստուգում է համակարգի անվտանգությունը, այնտեղ փոխանակվող և պահվող տվյալների ապահովությունն ու մատչման վավերականությունը:
Խոցելիության թեստավորում Vulnerability testing	Ուղղված է բացահայտելու Համակարգի բնականոն աշխատանքի հետ փոխկապակցված կապուղիների և տվյալների շտեմարանների թույլ և խոցելի տեխնիկական կետերը և ստուգելու ծրագրային միջոցները:
Տվյալների արտահոսքի թեստավորում Data leakage testing	Ուղղված է բացահայտելու և ստուգելու Համակարգում մուտքագրված կամ արխիվացված տվյալների անօրինական փոխանցման կամ հնարավոր այլ տարբերակով ձեռքբերման ռիսկերը:
Ներթափանցման թեստավորում Penetration testing	Ուղղված է ստուգելու և բացահայտելու Համակարգ անօրինական կամ չթույլատրված հարձակմամբ ներթափանցման մոդելավորման հնարավոր եղանակները:
Համընդհանուր թեստ System testing	Համակարգի համընդհանուր թեստավորումն է, որն ուղղված է ստուգիչ վերջնական թեստավորում իրականացնելուն՝ ըստ Համակարգի բիզնես տրամաբանության և գործառույթների փոխազդեցության:
Օգտագործողի ընդունման թեստ User Acceptance Testing (UAT)	Իրականացնում է նախագծի գլխավոր պատվիրատուն/շահառուն՝ Կատարողի բիզնես վերլուծաբանների օգնությամբ՝ համակարգի ամբողջական ֆունկցիոնալությունը վավերացնելու համար: Սովորաբար իրականացվում է ընհանուր համակարգի կամ դրա որևէ ենթահամակարգի ամբողջական թողարկումից առաջ:

- Ուսուցման իրականացում

14. Կատարողը պետք է իրականացնի վերակառուցված կամ ձևափոխված համակարգերի վերաբերյալ ուսուցումներ:
15. Կատարողը մինչև ուսուցման իրականացումը պետք է ներկայացնի ուսուցման ծրագիր:
Ուսուցման ծրագիրը պետք է կազմված լինի՝
 - 15.1. Համակարգից օգտվողների ուսուցման սկզբունքով,
 - 15.2. Վերապատրաստողների վերապատրաստման սկզբունքով,
 - 15.3. Արմստատի SS ոլորտի աշխատակիցների ուսուցման սկզբունքով:
16. Դասընթացի նկարագրությունը պետք է ներառի, բայց չսահմանափակվի հետևյալով.
 - 16.1. դասընթացի անվանում,
 - 16.2. դասընթացի նպատակ,
 - 16.3. մատուցման մեթոդներ,
 - 16.4. դասընթացի տևողությունը և մասնակիցների քանակը մեկ դասընթացի համար,
 - 16.5. դասընթացի բովանդակության և պլանի նկարագրություն,
 - 16.6. դասընթացն անցկացնողի որակավորումն ու փորձը:
17. Ուսուցման ընթացքում պետք է ներկայացվեն համակարգի օգտվողի ձեռնարկներ, որոնք պետք է առնվազն ներառեն հետևյալը.
 - 17.1. համակարգի/ենթահամակարգի նկարագրություն,
 - 17.2. գործառնությունների նկարագրություն,
 - 17.3. հաղորդագրությունների նկարագրություն, ներառյալ՝ համակարգի սխալների վերաբերյալ հաղորդագրությունների նկարագրություն,
 - 17.4. գործնական օրինակներ/պատկերներ,
 - 17.5. համակարգերի վերականգնման, պահուստավորման (backup, restore) ընթացակարգերի նկարագրություն (SS անձնակազմի համար):
18. Ուսուցման լեզուն պետք է լինի հայերեն: Եթե Կատարողը ընկերությունն ուսուցումներ անցկացնելու համար ներգրավում է օտարերկրյա փորձագետ, ապա թարգմանչական ծառայությունները վճարվում են իր կողմից:
19. Փոխանցված բոլոր տեսակի տեղեկություններն ու գիտելիքները պետք է լինեն փաստաթղթավորված և Կատարողը պետք է բոլոր փաստաթղթերը տրամադրի Պատվիրատուին թե՛ տպված, և թե՛ էլեկտրոնային կրիչով:

- Համապատասխանություն օրենսդրությանը

20. Համակարգը պետք է համապատասխանի ՀՀ օրենսդրությանը, պաշտոնական վիճակագրության մասին ՀՀ օրենքին, համապատասխան միջազգային պայմանագրերին և համաձայնագրերին: Համապատասխան օրենսդրական և (կամ) իրավական փոփոխությունների արդյունքում Համակարգում ներդրվող նոր ծրագրային բաղադրիչների և (կամ) ծառայությունների համար նույնպես իրականացվում է սպասարկում Կատարողի կողմից:

- Կիրառվող տեխնոլոգիաներ

21. Կատարողը պետք է առաջարկի այնպիսի տեխնոլոգիաներ, որոնք համազոր են Պատվիրատուի կողմից ներկայումս կիրառվող տեխնոլոգիաներին, գործող ենթակառուցվածքը և գործընթացները խթանելու նպատակով պետք է առավելագույնս օգտագործվի գործող SS ենթակառուցվածքը:
22. Կատարողը Համակարգի մշակման, զարգացման, փոփոխությունների և հավելումների իրականացման ընթացքում պետք է հաշվի առնի համատեղելիությունը Համակարգում ներկայումս կիրառվող տեղեկատվական համակարգերի հետ: Առաջարկվող կարգաբերումները չպետք է խափանեն Համակարգի ենթահամակարգերի աշխատունակությունը և բերեն կիրառվող բիզնես գործընթացների էական փոփոխության:
23. Կատարողի կողմից ծրագրային փոփոխությունների իրականացման ընթացքում պետք է իրականացվի պարբերական ծրագրային աուդիտ և ներկայացվի այն Պատվիրատուին:

24. Դերերի կառավարման համակարգը պետք է լինի միասնական: Պետք է տրամադրվի դերերի, իրավասությունների և հասանելիությունների կառավարման արդյունավետ գործիք, որը թույլ կտա ստեղծել համակարգի ցանկացած մոդուլի և գործառույթի օգտագործման թույլտվություններ, խմբեր և այլն:

25. Վերակառուցված Համակարգը պետք է ներդրվի երեք առանձին միջավայրերում՝ արտադրական, թեստավորման, պահուստային:

26. Կիրառվող դասակարգիչները պետք է լինեն միասնական:

27. Օպերացիոն համակարգ՝ Rocky Linux 8.9:

28. Կիրառվող տեխնոլոգիաները.

28.1. Ծրագրավորման լեզուներ՝ PHP 8, JavaScript

28.2. Backend ֆրեյմվորք՝ Laravel 6

28.3. Frontend նշագրման և ոճավորման լեզուներ՝ HTML, CSS

28.4. JavaScript գրադարան՝ jQuery

28.5. Տվյալների բազաներ՝ PostgreSQL 14 RDBMS

28.6. Տվյալների հիմնապաշարներ՝ PostgreSQL + Pentaho

28.7. Հիպերվայզոր՝ VMware vSphere 7.0.3

– Անվտանգություն

29. Համակարգը պետք է իրականացնի տեղեկատվության ցանկացած փոփոխության, ցանկացած գործողության գրանցում (activity logging, error logging). Օգտագործողի բոլոր գործողությունները պետք է գրանցվեն գրանցամատյանում: Գրանցամատյանների միջոցով պետք է հնարավոր լինի հետևել, թե երբ և ում կողմից ինչ գործողություններ են իրականացվել համակարգում: Գրանցումը, ի լրումն այլ տեղեկատվության, պետք է ներառի գործողության ժամը, IP հասցեն, կատարողի ինքնությունը և այլն:

30. Համակարգում պետք է կիրառվեն փոփոխությունների աուդիտի ներդրված մոտեցումները:

31. Համակարգը պետք է ինքնաշխատ կերպով «արգելակի» օգտվողի աշխատաշրջանը՝ օգտվողի «անգործության» սահմանված ժամանակաշրջանից հետո՝ այդ մասին հաղորդագրություն ուղարկելով օգտվողին:

32. Ծրագրային մակարդակում պետք է իրականացվեն մուտքի թույլատրման (access/authorization) մի շարք միջոցառումներ, որոնք ապահովելու են վավերացված մուտքը միայն նախատեսված օգտվողների համար, այդ թվում՝ մուտքի թույլատրում կրկնակի նույնականացման եղանակով: Մուտքի իրավունքները պետք է հիմնված լինեն դերերի վրա: Յուրաքանչյուր դերի համար պետք է սահմանված լինեն կոնկրետ իրավասություններ և հասանելիություններ:

33. Պետք է իրականացվեն նաև գաղտնաբառերի պարբերական թարմացման (password expire policy) և մուտքային տարբեր մակարդակների (access level control) ապահովման միջոցառումներ:

34. Համակարգի տեղեկատվական անվտանգության ապահովման կանոնները պետք է համապատասխանեն ՀՀ Կառավարության «Կիբեռանվտանգության բազային պահանջները հաստատելու մասին» 424-ԼԳ որոշմամբ սահմանված հիմնարար սկզբունքներին:

35. Համակարգը պետք է ապահովի OWASP TOP 10 կողմից նկարագրված խոցելիություններից պաշտպանված լինելը:

36. Պետք է կատարվեն միջոցառումներ՝ ուղղված «ծառայության մերժման» գրոհներից (DoS/DDoS attack) պաշտպանության աստիճանի բարձրացմանը:

36.1. DoS/DDoS պաշտպանություն՝ ավտոմատ կանոններով և հարձակումների մասին հաշվետվությունների տրամադրում աղմինիստրատորին:

– **Գործածելիություն**

37. Օգտվողի միջերեսը պետք է լինի հարմար օգտագործման և դյուրին յուրացման համար: Կիրառվող տերմինները և/կամ հապավումները պետք է լինեն հասկանալի և մատչելի վերջնական օգտվողի համար:

38. Համակարգը պետք է ունենա որոնման արդյունավետ մեխանիզմ: Պետք է հնարավոր լինի իրականացնել որոնում և գտնում կառուցվածքի բոլոր դաշտերով՝ ըստ ընտրության:

39. Համակարգի թարմացման գործընթացը պետք է դյուրին լինի վերջնական օգտվողների համար և իրականացվի առանց ծրագրային կոդի (no-code) լուծումներով՝ տրամադրելով գործիքակազմ:

– **Լեզվի ընտրություն**

40. Հաթկաների միջերեսները պետք է լինեն երեք լեզվով՝ հայերեն, անգլերեն և ռուսերեն:

41. Պետք է հնարավոր լինի տվյալները, ինչպես նաև տեղեկատու աղյուսակները մուտքագրել երեք լեզվով՝ հայերեն, անգլերեն և ռուսերեն:

– **Բացահայտված թերություններ**

42. Կատարողի տրամադրած ծրագրային ապահովումները և մատուցված ծառայությունները պետք է գերծ լինեն նախագծման, ծրագրային և այլ թերություններից, որոնք կարող են հանգեցնել Համակարգի և/կամ վերջինիս բաղկացուցիչ մասերի ոչ պատշաճ աշխատանքին, նախանշված պահանջների չկատարմանը, կատարողականության, հուսալիության, ընդլայնման, արտադրողականության խափանմանը:

43. Սպասարկման ընթացքում Համակարգի, ենթահամակարգերի նախագծման, ծրագրավորման կամ Կատարողի կողմից մատուցված ծառայությունների հետ կապված որևէ թերության բացահայտման դեպքում Կատարողը պետք է Պատվիրատուի հետ խորհրդակցի և բացառապես իր ֆինանսական միջոցներով վերացնի խնդիրը:

44. Կատարողը պատասխանատու չի լինի առաջացած վնասի կամ թերության վերացման համար հետևյալ դեպքերում՝

44.1. Պատվիրատուի կողմից Համակարգի ոչ պատշաճ գործարկում կամ պահպանում,

44.2. Պատվիրատուի կամ երրորդ կողմի միջոցով համակարգում փոփոխություններ անելու դեպքում, որը նախատեսված չէ տեխնիկական առաջադրանքով և չի հաստատվել Կատարողի կողմից:

45. Թերության բացահայտման դեպքում Պատվիրատուն պետք է ծանուցի Կատարողին այդ մասին՝ ներկայացնելով թերության նկարագրությունը՝ առկա ողջ փաստարկներով:

46. Համակարգի փոփոխությունների ընդունման թեստի արդյունքում հայտնաբերված խնդիրները (սխալները) դասակարգվելու են հետևյալ սկզբունքով՝

46.1. Արգելափակող (Blocker) - Արգելափակող սխալ, որը բերում է համակարգի աշխատանքի խափանմանը, որի արդյունքում համակարգի կամ դրա հիմնական գործառույթների հետ հետագա աշխատանքը անհնար է դառնում:

46.2. Կրիտիկական (Critical) - Կրիտիկական սխալ, որի արդյունքում համակարգի բիզնես տրամաբանությունը սխալ է, առկա է անվտանգության խնդիր, առաջանում է սերվերի խափանում և այլն:

46.3. Հիմնարար/կարևոր (Major) - Բիզնես տրամաբանության հիմնական մասը ճիշտ չէ աշխատում, թերությունը կրիտիկական չէ, հնարավոր է շարունակել աշխատանքը թեստավորվող համակարգի հետ:

- 46.4. Աննշան (Minor) - Աննշան սխալ, որը չի խախտում թեստավորվող հատվածի բիզնես տրամաբանությունը, օգտվողի միջերեսի ակնհայտ խնդիր:
- 46.5. Չնչին (Trivial) - Չնչին խնդիր, որը չի վերաբերում բիզնես տրամաբանությանը, վատ վերարտադրվող սխալ, որը օգտվողի միջերեսից հիմնականում տեսանելի չէ, երրորդ կողմի գրադարանների, ծառայությունների հետ կապված խնդիր, որը չունի որևէ ազդեցություն համակարգի ընդհանուր որակի վրա:
47. Թեստավորման արդյունքում ներքոնշյալ դեպքերում համակարգերը և/կամ ծրագրային ապահովումները և/կամ դրանց տարբերակները չեն ընդունվելու Պատվիրատուի կողմից՝
- 47.1. Արգելափակող (Blocker) որևէ սխալի առկայություն,
 - 47.2. Կրիտիկական (Critical) որևէ սխալի առկայություն,
 - 47.3. Հիմնարար/կարևոր (Major) 2 և ավելի սխալի առկայություն կամ 1 հիմնարար/կարևոր (Major) և 4 և ավելի աննշան (Minor) սխալի առկայություն կամ 1 հիմնարար/կարևոր (Major) և 7 և ավելի չնչին (Trivial) սխալի առկայություն
 - 47.4. Աննշան (Minor) 5 և ավելի սխալի առկայություն կամ 4 աննշան (Minor) և 5 և ավելի չնչին (Trivial) սխալի առկայություն
 - 47.5. Չնչին (Trivial) 10 և ավելի սխալի առկայություն
 - 47.6. Իրական արտադրական միջավայրում թարմացման արդյունքում այլ համակարգում կամ նույն համակարգի այլ գործառնություն և (կամ) հատկանիշում սխալի առկայություն:

– **Իրավական պայմաններ**

48. Պայմանագրով մատուցված ծառայությունների արդյունքները հանդիսանում են Պատվիրատուի սեփականությունը: Պատվիրատուն իրավունք ունի օգտագործել, հրատարակել, փոխանցել, տեղափոխել դրանք իր հայեցողությամբ, առանց որևէ սահմանափակման՝ չխախտելով հեղինակների անձնական ոչ գույքային իրավունքները:
49. Կատարողը Պատվիրատուին է տրամադրում Համակարգի փոփոխությունների ծրագրային ապահովմանն առնչվող բոլոր նյութերը.
- 49.1. Ծրագրային կոդեր, տվյալների շտեմարանների սկրիպտներ և բոլոր անհրաժեշտ գրադարաններ
 - ծրագրային կոդեր,
 - կիրառական ծրագրեր,
 - գրադարաններ,
 - ֆայլեր, փաթեթներ և այլ ծրագրային ապահովումներ, որոնք հարկավոր են համակարգի բնականոն աշխատանքի համար
 - 49.2. Տեղակայման փաթեթ և տեղակայման ձեռնարկ (Deployment Package & Deployment Guide)
 - Համակարգի ներդնումը նկարագրող մանրամասն փաստաթուղթ, որտեղ ներկայացված են՝ համակարգի ներդնման համար անհրաժեշտ ծրագրային ապահովումները, կիրառական սերվերները, գրադարանները, դրանց տարբերակները, ներդրման քայլերի հաջորդականությունը
 - Կոնֆիգուրացման հրահանգները
 - Նոր ապարատային ապահովման վրա տեղադրման կարգը
 - 49.3. Համակարգի ճարտարապետության նկարագրություն
 - Համակարգը նկարագրող տեխնիկական փաստաթղթերը, որոնք ներառում են՝ կոմպոնենտների կառուցվածք, կապերը, միջավայրերի/topology-ի նկարագրություն, մոդուլների համագործակցություն
 - 49.4. Համակարգում գործող բոլոր API-ների նկարագրություն
 - 49.5. Գործառնական և տեխնիկական բնութագրեր
 - տեխնիկական բնութագրերը, որոնք ներառվում են «համակարգը նկարագրող տեխնիկական փաստաթղթերի» մեջ
 - համակարգի գործունեության տեխնիկական կողմերի բացատրություններ
 - 49.6. Այլ տեխնիկական փաստաթղթեր, որոնք անհրաժեշտ են շահագործման համար

- համակարգի բնականոն աշխատանքի համար պահանջվող ծրագրային ապահովումների ցուցակը՝ միջավայրերում օգտագործվող գործիքների նկարագրությունը, կիրառական սերվերներ, գրադարաններ, տարբերակներ, այլ օժանդակ նյութեր, որոնք չեն ներառվել վերոնշյալ կետերում
- 49.7. Աղմինիստրավորման ձեռնարկ
- 49.8. Աղետներից վերականգնման պլան (DRP)
- 49.9. Թեստավորման ձեռնարկ և թեստավորման դեպքերի նկարագրություն (test cases)
- 49.10. Օգտագործողների ձեռնարկներ և ուսուցողական նյութեր
- 49.11. Կատարողը Պատվիրատուին ներկայացնում և երաշխավորում է հետևյալը.
 - Պատվիրատուին տրված ծրագրային ապահովման կոդը և փաստաթղթերը ամբողջական են, պատշաճ կերպով կազմված և ճշգրիտ պատճենն են ծրագրային ապահովման վերջնական ընդունման ժամանակահատվածում շահագործվող ծրագրային ապահովման տարբերակի:
 - Ցանկացած լրամշակումից հետո 15 օրվա ընթացքում Կատարողը Պատվիրատուին կտրամադրի փոփոխված ծրագրային կոդը, ինչպես նաև համապատասխան փաստաթղթերը, որոնք նույնպես պետք է լինեն ամբողջական, պատշաճ կերպով կազմված և համապատասխանեն լրամշակված ծրագրային ապահովման գործող տարբերակին:
 - Ծրագրային կոդը կպարունակի ողջ տեղեկատվությունը ընթեռնելի տարբերակով այնպես, որ ծրագրավորողը կամ վերլուծաբանը կարողանա պահպանել և բարելավել ծրագրային ապահովումը: Ծրագրային կոդը և համապատասխան փաստաթղթերը պետք է պարունակեն ծրագրավորողի բոլոր մեկնաբանությունները, տեղեկատվության մոդելները, գործընթացների հերթականության սխեմաները և այլն:
- 49.12. Ծրագրային կոդերը պետք է լինեն բաց: Պատվիրատուին տրամադրման են ենթակա.
 - Կիրառվող գրադարանները (բաց)
 - Կիրառական ծրագրերի սերվերները
 - Սկրիպտերը
 - Համակարգի բնականոն աշխատանքի և նոր ապարատային ապահովման վրա համակարգերի ներդրման, կոնֆիգուրացման, շահագործման համար անհրաժեշտ այլ ֆայլեր, փաթեթներ և այլ ծրագրային ապահովումներ,
 - Համակարգի ներդնումը նկարագրող փաստաթղթեր, որտեղ նշված են համակարգերի, ներդնման անհրաժեշտ ծրագրային ապահովումները, կիրառական սերվերները, ներդրման քայլերի հաջորդականությունը և այլն, և որը հասկանալի կլինի հմուտ մասնագետների համար,
 - Համակարգերը նկարագրող տեխնիկական փաստաթղթերը:

– Հաշվետվությունների ներկայացում

50. Կատարողը յուրաքանչյուր ամսվա 15-ին օրենսդրությամբ սահմանված կարգով Պատվիրատուին է ներկայացնում նախորդ հաշվետու ժամանակահատվածի ընթացքում կատարված աշխատանքների վերաբերյալ արձանագրություն՝ հետևյալ կառուցվածքով և բովանդակությամբ.
- 50.1. **Փակված և ավարտված աշխատանքներ.** արձանագրության այս բաժնում ներկայացվում են այն աշխատանքները, որոնք Կատարողի կողմից իրականացվել են Պատվիրատուի համապատասխան առաջադրանքների համաձայն, ի հայտ չեն եկել «Բացահայտված թերություններ» բաժնում ներկայացված 47-րդ կետում նշված դեպքերը, և Կատարողի կողմից համապատասխան ծրագրային կոդի՝ Պատվիրատուին փոխանցելուց հետո տասն (10) աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուի կողմից Կատարողին չի ներկայացվել տեղեկատվություն Պատվիրատուի կողմից անցկացված ստուգման արդյունքում բացահայտված թերությունների վերաբերյալ:
- 50.2. **Իրականացվող աշխատանքներ.** արձանագրության այս բաժնում ներկայացվում են այն աշխատանքները, որոնց վերաբերյալ առաջադրանքները ներկայացվել են Պատվիրատուի կողմից, սակայն դրանք դեռևս չեն ավարտվել՝ սույն 50-րդ կետի պահանջի 1-ին կետում նշված պայմաններին համապատասխան: Նշված բաժնում ներկայացվող աշխատանքները Կատարողի կողմից ներկայացվում են դրանց՝ համապատասխան փուլերի բաժանման միջոցով: Նշված փուլերը կարող են ներառել, սակայն չեն սահմանափակվում հետևյալ տարբերակներով՝ տեխնիկական առաջադրանքի

կազմում, վերլուծություն, ծրագրավորման աշխատանքներ, թեստավորում, ի հայտ եկած խնդիրների շտկում:

Յուրաքանչյուր փուլի համար նշվում է նաև համապատասխան կարգավիճակ համաձայն հետևյալ ցանկի՝

- Չի սկսվել (backlog)
- Վերաբացված (reopened)
- Իրականացվում է (selected for development)
- Ընթացքում է (in progress)
- Պատրաստ է թեստավորման Կատարողի կողմից (ready for test by Contractor)
- Թեստավորվում է Կատարողի կողմից (testing by Contractor)
- Ներկայացվել է ստուգման Պատվիրատուին (presented to Client for checking)
- Ստուգվում է Պատվիրատուի կողմից (checking by Client)
- Ավարտված է (done)
- Փակված (closed)
- Չկատարված (not implemented)

Ընդ որում, «Ստուգվում է Պատվիրատուի կողմից (checking by Client)», «Փակված (closed)» և «Չկատարված (not implemented)» կարգավիճակները կարող են ընտրվել միայն Պատվիրատուի կողմից:

Բացի կարգավիճակից յուրաքանչյուր փուլի վերաբերյալ Կատարողի կողմից կարող են ներկայացվել մեկնաբանություններ և (կամ) լրացուցիչ տեղեկություններ:

50.3. **Սխալներ.** ներկայացվում են տեղեկություններ API-ների սխալների և այլ խնդիրների վերաբերյալ: Տրամադրվում է log-րի մատյան:

50.4. **Ծրագրային աուդիտի արդյունքներ.** ներկայացվում են արդյունքներ և տեղեկատվություն ծրագրային կոդի օպտիմալացման վերաբերյալ:

50.5. **Հընդունված արձանագրություն.** արձանագրությունը համարվում է չընդունված, եթե դրանում ներառված՝ Պատվիրատուի կողմից ներկայացված՝ Ավարտված (done) կարգավիճակով առաջադրանքների (tickets/tasks) առնվազն 30 (երեսուն) տոկոսը ենթակա է վերաբացման կամ վերաբացված է համաձայն «Թեստավորման իրականացում» բաժնում նկարագրված 12-րդ կետում սահմանված չափանիշների:

51. Կատարողը պետք է Համակարգի սպասարկման ժամանակահատվածի ավարտին՝ դեկտեմբեր ամսվա առաջին տասնօրյակում (մինչև ամսվա 10-ը), ներկայացնի եզրափակիչ հաշվետվություն:

51.1. Ընթացքի, առաջարկների, խորհուրդների հետագա բարելավումների վերաբերյալ (Recommendation), ինչպես նաև աշխատանքների ծավալի:

– Լրացուցիչ պահանջներ

52. Կատարողը պարտավորվում է չբացահայտել ծառայությունների մատուցման ժամանակ նրան հասանելի դարձած տեղեկատվությունը: Տեղեկատվության չբացահայտման վերաբերյալ Արմատատի կողմից կատարողի հետ կնքվելու է երկկողմանի պայմանագիր:

53. Կատարողը պարտավորվում է, ոչ ուշ քան Պայմանագրի կնքումից 15 օրացուցային օրվա ընթացքում, Պատվիրատուին գրավոր տեղեկացնել Կատարողի գրասենյակի՝ անձնակազմի տեղակայման, վերաբերյալ տեղեկատվություն (գտնվելու վայր, հասցե, հեռախոս, էլեկտրոնային փոստ) և սույն ծառայության նպատակով անձնակազմում ներգրավված աշխատակիցների վերաբերյալ տեղեկատվություն (անուն ազգանուն, զբաղեցրած պաշտոն, իրականացվող աշխատանք): Ընդ որում, գրասենյակի և սույն ծառայությունում ներգրավված աշխատակիցների փոփոխության դեպքում 3-օրյա ժամկետում Կատարողը պարտավոր է Պատվիրատուին գրավոր տրամադրել սույն մասով նախատեսված տեղեկատվությունը: Պատվիրատուն ցանկացած ժամանակ իրավունք ունի ստուգել Կատարողի կողմից ներկայացված տեղեկատվությունը:

54. Ծառայությունների մատուցման ընթացքում անհրաժեշտություն առաջանալու դեպքում Կատարողը պետք է ապահովի աշխատանքային քննարկումների իրականացում Պատվիրատուի համապատասխան աշխատակիցների հետ: Ընդ որում, քննարկման անհրաժեշտություն առաջանալու դեպքում Պատվիրատուն էլեկտրոնային փոստի կամ այլ կապի միջոցով (Օր.՝ Telegram, WhatsApp և այլն) տեղեկացնում է Կատարողին, որն էլ 1-օրյա ժամկետում ապահովում է նախատեսված քննարկումը: Ելնելով քննարկվող հարցերի բովանդակությունից՝ այն կարող է իրականացվել ըստ Պատվիրատուի ցանկության կամ Պատվիրատուի համապատասխան վարչական շենքում կամ Կատարողի գրասենյակում:

55. Համակարգի բարելավման և լրամշակման ծառայությունները ներառում են՝

55.1. Վիճակագրական հաշվետվությունների ներկայացման հարթակ (այսուհետ՝ ՀՆՀ).

1. Հարթակի դիմային էջի բարելավում:
2. Ռեսպոնդենտների նույնականացման գործընթացի բարելավում, ոչ ռեզիդենտների մուտքի ապահովում:
3. Հաշվետվությունների ներկայացման մոդուլի բարելավում, բաժիններում տվյալների աղյուսակների ցուցադրման արդիականացում, բաժինների միջև տեսանելի նավիգացիայի ապահովում (Step Wisard) և տվյալների վերբեռնման (upload) հնարավորություն:
4. Ռեսպոնդենտի պրոֆիլի արդիականացում և բարելավում:
5. «Հաշվետվությունների պատմություն» բաժնի բարելավում, հնարավորության դեպքում Հաշվետվությունների ձևի բոլոր ուղարկված տարբերակների պահպանում (versioning):
6. Ներկայացված հաշվետվությունների՝ նախորդ ժամանահատվածից Clone-ի ստեղծման հնարավորություն:
7. Լիազորման գործընթացի բարելավում, ըստ հաշվետվությունների ձևի լիազորման հնարավորություն:

55.2. Վիճակագրական հաշվետվությունների կառավարման հարթակ (այսուհետ՝ ՀԿՀ).

8. ՀՆՀ-ում կատարված լրամշակման աշխատանքները, փոփոխությունները պետք է կառավարվեն ՀԿՀ-ի համապատասխան մոդուլների կամ գործիքների միջոցով:
9. «Ադմինիստրատորի կարգավորումներ» ենթահամակարգի մոդուլների բարելավման աշխատանքների իրականացում: Աշխատակիցների անձնական էջի խմբագրում, գաղտնաբառի վերականգնման հնարավորություն:
10. Հաշվետվությունների կառավարման «Տվյալների կառավարում» ենթահամակարգի բարելավում, առկա գործառույթների ավտոմատացում, հաշվետվությունների տվյալների ստուգումների և վերահսկումների (կանոնների) մոդուլի կատարելագործում, այդ թվում թեստավորման հնարավորություն:
11. Ռեսպոնդենտների Ռեգիստրի կառավարման «Կազմակերպությունների գրանցամատյան» ենթահամակարգի բարելավում, առկա գործառույթների ավտոմատացում և կատարելագործում:
12. Տվյալների ստանդարտի կառավարման «Տեղեկատու աղյուսակներ» ենթահամակարգի բարելավում և ավտոմատացում՝ ներբեռնման (download)/վերբեռնման(upload) հնարավորությամբ:
13. «Ռեսպոնդենտների խմբեր» ենթահամակարգի բարելավում և գործընթացի ավտոմատացում:
14. «Ներկայացված հաշվետվությունների» ենթահամակարգի բարելավում:
15. «Ռեսպոնդենտների դիմումների» ենթահամակարգի բարելավում:
16. «Լիազորում» ենթահամակարգի բարելավում, ըստ հաշվետվությունների ձևի լիազորման հնարավորություն:
17. Ծանուցումների ենթահամակարգի արդիականացում:
18. Վարչական տույժերի կառավարման ենթահամակարգի բարելավում, կառուցվածքի փոփոխում և ոչ պատշաճ հաշվետվություն ներկայացնողների և/կամ չներկայացնողների մատյանի բարելավում:
19. ՀԿՀ-ի բոլոր ենթահամակարգերի մոդուլներում, անհրաժեշտության դեպքում, Excel ձևաչափով ներբեռնման (download)/վերբեռնման(upload) հնարավորության ստեղծում:

20. «Աշխատակցի գրասենյակ» ենթահամակարգի, այդ թվում՝ մոդուլների, բարելավում: Ելքային աղյուսակների (custom output tables) մոդուլի ստեղծում, տվյալների կառավարման գործիքի տրամադրում:
21. Այլ համակարգերի միջև տվյալների արդյունավետ փոխանակման համար տվյալների սահմանված կառուցվածքով API -ի հնարավորությունների ընդլայնում և կառավարման գործիքի տրամադրում:
22. Տվյալների վիզուալիզացիայի ենթահամակարգի արդիականացում և լրամշակում՝ առկա տվյալների մշտադիտարկման հնարավորությամբ: SDMX ստանդարտին համապատասխան հաշվետվությունների կարգավորում, ավտոմատ գեներացում և տարածում:
23. Տվյալների փոխակերպման և միգրացիայի իրականացում:
24. Հաշվետվություններում առկա 1000 դրամից անցում դրամի, ինչպես նաև շտեմարաններում առկա տվյալների փոխակերպում:

Սույն Տեխնիկական առաջադրանքի 55 կետով նախատեսված աշխատանքների շրջանակում Պատվիրատուն իրավունք ունի, իր գործառույթներից բխող անհրաժեշտությունից, ինչպես նաև առաջացած նոր կամ չնախատեսված խնդիրների դեպքում, ճշգրտել, փոփոխել կամ վերադասավորել աշխատանքների ծավալը և առաջնահերթությունները, առանց դրանց ընդհանուր նպատակի և պայմանագրով սահմանված շրջանակների փոփոխության: Նշված փոփոխությունները կարող են նախատեսել որոշ աշխատանքների փոխարինում այլ համարժեք աշխատանքներով՝ ելնելով Պատվիրատուի ընթացիկ կարիքներից և իրավիճակից՝ համաձայնեցնելով Կատարողի հետ:

III. ԳԱՂՏՆԻՈՒԹՅՈՒՆ

Կատարողը հանձն է առնում գաղտնի պահել ողջ այն տեղեկատվությունը, որը հանրամատչելի չէ, և չեն ստանձնի որևէ այլ հանձնարարություն, որը կհանգեցնի շահերի բախման:

Կատարողը պարտավորվում է առանց Պատվիրատուի գրավոր համաձայնության որևէ կողմի (բացի նախագծերի կազմակերպչական կառուցվածքում նշված անձանցից) չտրամադրել աշխատանքների իրականացման շրջանակներում ստացված որևէ տեղեկատվություն՝ անկախ ստացման ձևից (գրավոր, բանավոր, էլեկտրոնային, և այլն): Սույն դրույթը կիրառվում է նույնիսկ պայմանագրի դադարեցումից հետո:

Պայմանագրի դադարեցումից հետո Կատարողը ոչ ուշ քան 10 օրվա ընթացքում պետք է ոչնչացնի պայմանագրի շրջանակներում ստացված տեղեկատվությունը՝ անկախ ձևից և բովանդակությունից, բացառությամբ այն դեպքերի, երբ ՀՀ օրենսդրությունը պահանջում է դրանց պահպանումը:

Կատարողը պարտավոր է ստորագրել չբացահայտման համաձայնագիր (NDA: Non-disclosure agreement):

Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ ՈՒ

Վիճակագրական կոմիտե
Ք. Երևան, Կառավարական տուն 3
ՀՎՀՀ 02507509
ՀՀ ՖՆ Գործառնական վարչություն
Հ/Հ 900011011013
Գլխավոր քարտուղար՝

Ա. Հայրապետյան

/ստորագրություն/
Կ.Տ



Կ Ա Տ Ա Ր Ո Ղ

«Բիոնկոդ» ՍՊԸ
ք. Երևան, Հակոբ Հակոբյան 3
ՀՎՀՀ 00142121
«Ինելկոբանկ» ՓԲԸ
Հ/Հ 2052822071461001
Տնօրեն՝

Ա. Հովակիմյան

/ստորագրություն/
Կ.Տ



Պայմանագրի կողմ

գտնվելու վայրը _____
հհ _____
հվհհ _____

Պատվիրատու

գտնվելու վայրը _____
հհ _____
հվհհ _____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ
ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ « » « » 20 թ.

Պայմանագրի համարը՝ _____

Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ____ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	անվանումը	տեխնիկական ընդհանուր չարադրանքը	Մատուցված ծառայությունների				Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը			
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց

ստորագրություն

ազգանուն, անուն

Կ.Տ.

Ծառայությունն ընդունեց

ստորագրություն

ազգանուն, անուն

Կ.Տ.

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը

(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____-ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը

գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման
նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

ազգանուն, անուն

ստորագրություն

Ընդունեց

հայտը նախագծած ներկայացուցիչ՝

ազգանուն, անուն

ստորագրություն

Հավելված N 4
« 13 » մարտի 20 թ. կնքված
ՀՀ ՎԿ-ԲՄԽԾՁԲ-2026/1 ծածկագրով պայմանագրի

ԾԱՆՈԻՑՈՒՄ

_____ հայտնում է, որ .
ֆինանսական գործակալի անվանումը

1. _____-ի և _____-ի միջև «--» 20 թ. կնքված
պատվիրատուի անվանումը կատարողի անվանումը

«-----/-----» ծածկագրով պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) շրջանակում իր և

_____ -ի միջև «--» 20 թ-ին կնքվել է «-----» ծածկագրով ֆակտորինգի
կատարողի անվանումը
պայմանագիրը,

2. համաձայն է Պայմանագրի 7.10 կետով սահմանված պահանջներին:

_____ (ֆինանսական գործակալի անվանումը (ղեկավարի պաշտոնը, անուն ազգանունը))

_____ ստորագրությունը

Կ. Տ. (առկայության դեպքում)

«--» 20 թ.